Ենան՝ որդի Երդարու՝ թագաւորեաց յԱդեսիայ. և Սանատրուկ՝ քեռորդի Երդարու՝ թագաւորեաց յարևելս ամս Լ։ Սա հաւատաց 'ի քարոզութիւն առաքելոյն Թադէոսի, և դարձեալ եթող զհաւատն և սպան զսուրբն Թադէոս և զՍանդուխտ դուստրն իւր վկայուհին, որպէս գրեալ կան 'ի ճառս իւրեանց։

Երուանդ՝ ամս Ի. որ էր յԱրշակունի կնոջէ։ Սա սպան զորդիսն Սանատրկոյ. շինեաց զԼան և զԱդարան և զանտառ անասնոց՝ վասն որսոյ և զբօսանաց, և սպանաւ 'ի զօրացն Արտաշէսի։

Արտաշէս՝ որդի Սանատրկոյ՝ ամս ԽԸ։ (սա) սպան զԵրուանդ և ինքն թագաւորեաց. շինեաց զԱրտաշատ քաղաք՝ ուր խառնին Մեծամօր և Երասխ, և փոխեաց 'ի նմա զդիրեցկութիւնն Երուանդեայ քաղաքին։ Յաւուրս սորա լեռնային և դաշտային մարդ անգործ ոչ գտաւ յաշխարհն

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան